

գումն ունէր, եւ կար՝ զոր օրինակ՝ Հել-
լենաց քով: Հոմերոս կ'աւանդէ՝ որ մինչ-
դեռ Պատրոկլի մարմինը կ'այրէր, Աքիլ-
լեա անոր խարուկին շուրջ գետինը գինի
կը թափէր, կոչելով մեռելոյն հոգին (Իլ.
416): Ասոր համար կը յարէ Վարդան՝
թէ «չէ պարտ առնել». եւ Տաթեւացին՝
թէ «չէ պարտ, զի յուսահատութեան է
նշան եւ հեթանոսաց զործ»: Չէ պարտ.
եւ սակայն մինչեւ ցայսօր դեռ կը մնայ
Հայաստանի մէջ:

Ոչ նուազ կարեւոր է եւ այն՝ որ մա-
տաղի տիրոջ արգելում էր սեղանէն որ
եւ է բան տուն տանիլ՝ հետագայ օրե-
րուն ի պաշար. այլ պիտի շատանար նոյն
օրուան հարկաւորը միայն առնուլ, ինչ-
պէս կ'ազգարարէ Շնորհալին, իմացնելով
պատճառն ալ, «զի Աստուծոյ է նուի-
րեալ» (Ընդհ. 160): Զայս իբրեւ զեղ-
ծում դատապարտեց նաեւ Լաւոզիկեայ
ժողովը Յ63ին (Կարբ. Ա, 821), եւ Բար-
սղի ընծայուած կանոնները (ՃՂԸ), ո-
րոնք հաւանօրէն ծանօթ էին մեր հայրա-
պետին: Արդէն Մովսէս եւս կը պատուի-
րէր գոհութեան զոհն առ օրին ուտել ըս-
պառել (Ղեւտ. ԻԲ, 30):

8. — Հաց սգոյ: — Ղեւոնդ կ'աւանդէ
մեզ ուրիշ ճաշ մը: Երբ ննջեցեալն ողբալու